ՆՈՐ-ԴԱՐ

№ 65 ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ̇ապաթ 29 Ապրիլի — 1889 — Հ̇ապաթ 29 Ապրիլի ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 65

Տարեկան 10 րուբլի, վեց ամսոր՝ 6 րուբլի, երեք ամսոր՝ 3 ր. 50 կ., ամսոր՝ 1 ր., հատ՝ 5 կոպեկ։
Բաժանորդ գրուում են Թիֆլիսում մեհյան խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի աւօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն ժամ։
Յայտարարութիւնների բաժին 2 կ., բնկերացների համար կրճատութիւն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

Լրագրի բաժանորդագրութիւնը շարունակւում է.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ Է

Յունվարի 1-ից	10 ր. — կ.	Յուլիսի 1-ից	6 ր. — կ.
Փետրվարի 1-ից	9 » — »	Օգոստոսի 1-ից	5 » 25 »
Մարտի 1-ից	8 » 50 »	Սեպտեմբերի 1-ից	4 » 50 »
Ապրիլի 1-ից	8 » — »	Հոկտեմբերի 1-ից	3 » 50 »
Մայիսի 1-ից	7 » 25 »	Նոյեմբերի 1-ից	2 » 50 »
Յունիսի 1-ից	6 » 50 »	Դեկտեմբերի 1-ից	1 » 50 »

Եւրոպա, Թիւրքիա և այլ հեռաւոր երկիրներ տարեկան վճար՝ 30 ֆրանկ, վեց ամսականը՝ 20 ֆրանկ։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դիմաց, տ. № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты „НОРЪ-ДАРЪ“ կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Ազգի համար կրած փորձեր II։
Հեռագիրներ։
Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ. — Բաթում. Սուլթան-Նովին։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Թաւն լուրեր։
«Նոր-Դար»-ի պատասխաններ։
Բանասիրական. — Խորհրդաւոր միանձնուհի (շարուն.)։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 28 ապրիլի, 1889

ԱԶԳԻ ՀԱՄԱՐ ԿՈՐԱԾ ՓՈՂԵՐ

II

Նախընթաց առաջնորդողից տեսանք, որ ոչ թէ միայն ազգի օգտին արած կտակները կորչում, ոչընչանում են, այլ և ազգի օգտին կտակելու ձգտումը, մտադրութիւնը խափանւում է շատ անգամ զանազան մարդկանց և հանգամանքների շնորհիւ։

Որպէս զի ազգը և եկեղեցին չկորցնեն կտակներով իրենց հասանելի գումարները և ունևոր հայեր չզրկուին ազգին և եկեղեցուն իրենց կարողութիւնից բաժին հանելու կարելիութիւնից—պէտք է աշխատել հեռացնելու այն ամեն հանգամանքները, որոնք արգելք են լինում ազգի օգտին կտակ անելու մտադրութեան և կամ եղած կտակի կատարմանը։

Այդ միջոցներն այնքան տարբեր են, որքան խափանելու միջոցները տարբեր են։ Բայց ունմ պարտքն է հսկելու, որ ազգի օգտին կտակ անող հայը օրէնքի համաձայն յօրինէ կամ յօրինել տայ իր կտակը և ապահովացնէ չարամիտ մարդկանց յարձակումներից և նրանցից, որոնք կտակի խափանումից շահ ունին։

Ո՛ւմ պարտքն է կտակ անող հային իւր խորհուրդներով օգնելու և կարողութեան չափ գիւրացնելու կտակի գործը։ Ո՛ւմ պարտքն է հարուստ հայի՝ ազգի և եկեղեցու օգտին կտակ անելու ձգտումը, ցանկութիւնը մշակելու, և վառելու նրա մէջ իւր ազգի օգտին բարեգործութիւններ անելու ե-ռանդը։

Խոստովանահօր, ծխատէր քահանայի պարտքն է, կասկ ընթերցողը և չի սխալուիլ։

Այդպիսի դէպքերում ո՛վ կարող է աւելի մօտիկ լինել հարուստ կամ ունևոր հային, քան ծխատէր քահանան, նրա խոստովանահայրը։

Իբրև տան քահանայ, իբրև խոստովանահայր՝ այդտեղ քահանան իւր նախանձելի դերումն է։ Նրա պարտքն է գործելու, գործելու եռանդով և ազնուութեամբ, համոզուած լինելով, որ բարի գործ է կատարում, ազգի և եկեղեցու օգտին է գործում։

Բայց այդ լինում է, և խոստովանահայրերը իրենց պարտքը կատարում են. շատ սակաւ բացառութեամբ ոչինչ չէ լինում։

Եթէ շատ կտակներ կորչում են և շատ հարուստ հայեր մեռնում են և ազգի օգտին իրենց կարողութիւնից բաժին չեն հանում—մեծ մասամբ այդ պարտականն ենք ծխատէր քահանաներին։

Խոստովանահայրերը ոչինչ չեն անում նախ անտարբերութիւնից, երկրորդ՝ իրենք չեն կամենում այդ, որովհետև կարծում են, որ կողոպուտից բան կը պակասի իրենց, և երրորդ՝ ոչինչ ներգործութիւն, ազդեցութիւն չունին ծխատէր վրայ։ Այս վերջին դէպքում իրենք խոստովանահայրերը մեղաւոր չեն ուղղակի, ըստ որում քահանայութիւնը այնպիսի մի կոչում է, որ մարդուն բազմապատիկ բարձրացնում է, բայց նրան կարող են ստորացնել մարդիկ՝ հազարապատիկ։

Ո՛վ է մեղաւորը, որ հովիւը հօտի վրայ ազդեցութիւն չունի... բայց որքան գեղեցիկ է, որքան ցանկալի՝ երբ հովիւը չէ առաջնորդւում, այլ առաջնորդում է իւր հօտը Քրիստոսի ցոյց տուած առաքինի ճանապարհով։

Եթէ խոստովանահայրերն իրենց պարտքը հասկանան և անտարբերութիւնը փոխանակեն եռանդագին գործունէութեամբ, հարուստ կամ ունևոր հայը երբէք չի մոռանալ՝ շատ թէ քիչ՝ իւր կարողութիւնից բաժին հանելու իւր ազգի և եկեղեցու օգտին, ազգի օգտին եղած շատ կտակներ չեն կորչիլ և չեն փթիլ անյայտութեան մէջ և հարուստ հայեր չեն մեռնիլ առանց կտակի։

Հայերի մէջ ազգօգուտ նպատակով կտակ անելու գովելի սովորութեան մասին խօսելով հարկաւոր է ուշադրութիւն դարձնել և այն հանգամանքի վրայ, որ հայը կտակ անելիս որոշ շրջանակից չէ դուրս գալիս, նրա վերջին կամքը պատած է չինական պատերով։ Հայը դեռ մինչև այսօր էլ չէ հասկանում, որ կարելի է կտակով նպաստել հայոց թատրոնին, այս ինչ լրագրին, այն ինչ ընկերութեան։ Կտակ անող հայը չէ մտածում կտակով իւր կարողութիւնից բաժին հանելու, օրինակ, գրքերի հրատարակութեան ընկերութեանը, հայոց բարեգործական ընկերութեանը և այլ այդպիսի հաստատութիւններին։ Որքան մենք յիշում ենք, այդ կողմից հանդուցեալ ազնիւ Յովսէփ Մուրադեանցն օրինակելի բացառութիւն կազմեց՝ կտակելով իւր կարողութիւնը՝ եօթը հազար րուբլի Հայոց Բարեգործական Ընկերութեան, որի հեռաւորներին դեռ սպասում ենք։ Արդի Հայն էլ իւր նախորդին նման՝ երբ ազգի օգտին կտակ է անում, նախ կտակում է այս ինչ կամ այն ինչ եկեղեցու օգտին, Էջմիածնին, Երուսաղեմին՝ չմոռանալով և քահանային, յետոյ այս կամ այն դպրոցի օգտին. դրանցից դէնը հազուագիւտ բացառութիւններ են։

Խոստովանահայր քահանաներն իբրև Աստուծու տաճարի սպասաւորներ, կարծում ենք, որ այդ սովորական շրջանում գոնէ, պէտք է եռանդով գործել կարողանային, եթէ միայն ցանկութիւն և կամք ունենային։ Եկեղեցու և դպրոցի օգտին գործ դրած չանքն ընդունելի է և հաճելի Աստծուն։

Այդպիսով միայն կարելի է յուսալ, որ ազգի համար կորած փողերը գտնուին և այլ ևս չկորչեն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԱՐԻԶ, 27 ապրիլի.—Յուցահանդէս մտնելու համար ստացուած

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՄԻԱՆՁՆՈՒՀԻ *)

Ծունկս ե.

Երէկ վաղ առաւօտից արդէն ես ըղձակտում էի եկեղեցուն մօտ գտնուող անտառակում։ Արեւելքի եղանակ և զով առաւօտ էր. ցանկանում էի մի քանի ժամ չարունակ անցնել այդտեղ. բայց դպրոցական զանգակի ձայնը լսելով, այն կողմը չտակցի։

Պատչգամի վրայ պատահեցի քոյր Աննային, որ քաղցր ժպիտով իմ ողջոյնը ընդունեց։

—Ներեցէք ինձ, որ այսքան վաղ եմ այցելում ձեր դպրոցին,—ասացի ես,—ոլովհետև ցանկանում եմ օրուայ բոլոր պարապմունքին ներկայ գտնուել։

—Խնդրեմ, խնդրեմ, դուք մեծ հաճոյք կը պատճառէք ինձ, նկատեց քոյր Աննան, չարունակ քաղցր ժպիտով, համեցէք, լսեցէք, հարցաքննեցէք։

—Հարցաքննել. ոչ. մի խօսքով անդամ չեմ համարձակ ձեր պարապմունքը։

*) Տես «Նոր-Դար» № 64։

միայն կը լսեմ,—պատասխանեցի ես,—և մենք միասին մտանք դպրոցի առաջին դասատունը։

Մաքուր և ընդարձակ սենեակի մէջ, կոկիկ չինած նստարանների վրայ չարուած էին աչակերտներ և աչակերտուհիներ, թուով, ինչպէս յետոյ հաչուեցի, երեսուն հոգի։ Նստարանները դրած էին երկու կարգ, որոնց առաջնի վրայ նստած էին աչակերտուհիները և երկրորդի վրայ աչակերտները։

Երբ մենք ներս մտանք, բոլորը համեստութեամբ ոտքի ելան, ողջունեցին մեզ և վարժուհու հրամանով սկսան երգել առաւօտեան աղօթքը, որ եկեղեցում լսածս երգեցողութեան չափ քաղցր և ներդաշնակ էր։

Աղօթքից յետ դասը սկսուեցաւ, որ հայոց լեզուից էր։ Խոստովանեցան աւետարան, որից աչակերտները կարդում, թարգմանում և դրատախտակի վրայ գրում էին Վարժուհին սիրով և աշխուժով բոլորին հարցնում, լսում, ուղղում և բացատրում էր։ Իրենք աչակերտներն էլ Սիրնեակ երկրի ծնունդ լինելով՝ չափազանց ընդունակ և սրամիտ էին. պատասխանողներից ևոչ մինը ժժգոհութիւն չպատճառեց իւր վարժուհուն։

Ցետոյ քոյր Աննան սկսաւ նոր դասը խօսել, կարդալով աւետարանից մի ուրիչ դլուխ և թարգմանելով։ Խժռարիմայ բառերն ու մտքերը նա ուչադիր հոդածութեամբ բացատրում և տակաւնում էր, կրկնել տալով նորից թոյլ աչակերտներին։ Նրա բացատրութիւններն առհասարակ այնքան պարզ, անպաճոյճ և դիւրըմբռնելի էին, որ ինքս էլ մեծ հաճութեամբ լսում էի նրանց։ Ինձ համար անհրաժեշտ չպիտու ասին, որ նրա բոլոր դասատուութեան ժամանակ, ես լսում էի ոչ թէ պաշտօնական վարժուհու՝ այլ գորովագութ մօր ձայնն և երեսի այդ էր պատճառը, որ նրա աչակերտների մէջ համեստութեան հաւասար ցոյանում էր և հոգու ազատութիւն։

Դասն աւարտելուց յետ մենք դուրս գնացինք պատչգամ, իսկ աչակերտներն ու աչակերտուհիները բոլոր իջան խաղալու։

Վերջիններիս մեծ մասը, գեղջկուհիներին յատուկ ամաչկոտութեամբ, հաւաքուեցան ծառատունի մի անկիւնը, և նրանցից միայն չատ փոքրիկներն բակման խաղալու։ Այդ հանդամանքը չատ զդալի եղաւ ինձ։

—Գեղջկուհին միչտ գեղջկուհի է, նկատեցի ես, ինչու այդ աղջիկները չին խաղում. նրանք այնքան մեծաչասակներ չեն, որ մեղանից քաչուէին։ Մինչ դպրոցական կեանքը դեռ ոչինչ չաղաւոխութիւն չէ մտցրել նրանց մէջ։

—Ոչ, և ես չեմ ցանկանում այդ, լրջութեամբ պատասխանեց քոյր Աննան. ես պահանջում եմ միևնոյն ժամանակ, որ գեղջկուհին միչտ գեղջկուհի մնայ։ Ես չեմ ցանկանալ, որ դպրոցը կապտէր նրանից այն թանկագին հատատութիւնը, որը նա յետոյ չէր կարող վերադարձնել առանց ծանրագին աչխատութեան։ Խօսքս այն ցեղական պարկեչտութեան մասին է, որ մեր գեղջկուհիներն ունին։ Ես, ի հարկէ, սովորեցնում եմ նրանց կարդալ և գրել, տանդամ եմ նրանց ինչ-որ ուսման կարևոր և իրենց անձին համար օգտակար կայ, աչխատում եմ, որ նրանց մտքերի հետ միասին կրթուին և ամրանան նրանց հոգիները, հատատուում և ամրապնդում եմ նրանց կրօնական զգացմունքները, միով բանիւ աչխատում եմ պատրաստել նրանցից մի որոչ չափով կրթուած հայ-գիւղացիներ։ Բայց միևնոյն ժամանակ մեծ զգուչութիւն եմ գործ դնում, որ իմ ներչնչած այդ նորութիւնները չխեղդեն նրանց մէջ գիւղացու այն յատկութիւնները, որոնք նրանց բարոյական կեանքի հաստատուն հիմունքներն են կազմում, և որոնք իմ աւանդած սահմանափակ կրթութեամբը չէին կարող արմատանալ նրանց մէջ, եթէ նրանք այդ չսովորէին իրենց ծնողներից և դիւղական անարատ միջավայրի մէջ։ Ի հարկէ, եթէ մենք եղած չինը քանդելով նրա տեղ նորը և լաւագոյնը հատատելու այժ ունենայինք, հարկաւ, այդ չինը աներկիւղ կը քանդէինք։ Բայց քանի որ ցանկալի այժը չկայ, անդրաժեչտ է, որ եղած լաւ յատկութիւնները խնամենք և պահպանենք նոյն իսկ իրենց չին կերպարանքի մէջ։ Այդ յատկութիւններն են դիւղական ամօթխածութիւնը, բարեպաչտութիւնը, պարզասրտութիւնը և աչխատասիրութիւնը։ Ես մեծ խնամքով եմ վերաբերւում դէպի այդ գեղեցիկ յատկութիւնները, աչխատելով, ի հարկէ, որ նրանցից մի քանիսը ծայրայեղութեան չհասնեն։ Օրինակ, որ նրանց ամօթխածութիւնը երկչոտութեան չհասնի և բարեպաչտութիւնը նախապաչարմունքների չվնասայ։ Թէպէտև այդ վերջին դէպքում ես չատ դգուչութեամբ եմ վարուում, որովհետև գեղջուկի կրօնականը նման է հնադարեան մի սրբատաչ չինութեան, որի վերայ, հարկաւ, դարերի ընթացքում նըս-

ՂՍԻՎՂՍՅԺ

Տրտմությամբ կը հաղորդենք մեր ընթերցողներուն, որ Ղարսի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգոր Արքեպս. Զաքարեան Ամենայն Հայոց Կաթողիկոսական Ընտրութեան Ընդհանրական Ժողովին Ներկայացուցիչ ընտրուած է։

Ընդհանրական Ժողովին Ներկայացուցիչ ընտրուած է Գերաշնորհ Տ. Գրիգոր Արքեպս. Զաքարեան, Առաջնորդ Ղարսի հայոց թեմի։

—

Ընդհանրական Ժողովին Ներկայացուցիչ ընտրուած է Գերաշնորհ Տ. Գրիգոր Արքեպս. Զաքարեան, Առաջնորդ Ղարսի հայոց թեմի։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԱՑԱԺՈՂՈՎՈՒՄ

— Հինգշաբթի, 14 սեպտեմբերի—Ֆրանսիայի հանրապետության նախագահ Կարնոն ընդունեց Ռուսաստանի ներկայացուցիչ գեներալ Բոբրիկովին, որ հանձնեց նրան կայսր Ալեքսանդր III-ի նամակը, որով նա հրավիրում է Ֆրանսիայի նախագահին Ռուսաստան գալ։ Ֆրանսիայի նախագահը պատասխանեց, որ ինքը շատ ուրախ կլինի այդ հրավերն ընդունել, եթե միայն իր պաշտոնական պարտականությունները թույլ տան։

— Ուրբաթ, 15 սեպտեմբերի—Ֆրանսիայի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Մսուրքա Սիմֆերօպոլի քաղաքային այգում խեղդուած են գտել մի 72 տարեկան ծերուկ-գիւղացու, որի անձնասպանութիւն գործելու պատճառը չեղել է այն վախը, թէ մի գուցէ էլի նոյնքան տարի ապրի ալքաթչքիս երեսին, որովհետև ապրելը չատ ծանր բան է։

*** Նուսուվ Պետերբուրգ կը գայ ամերիկացի հռչակաւոր միլիոնատէր Վանդերբիլդը, որ Ռուսիայում ճանապարհորդութիւն է անելու։

*** Էդիսոնի բարեկամ դնդապետ Գուրօնը և պրօֆէսսոր Նահէնը Պարիզի գիտութեան ճեմարանի վերջին նիստում ցոյց տուին Էդիսոնի կատարելագործած ձայնախօսը։ Մի փոքրիկ գլան, որը կարող է 1000 խօսք բովանդակել, ըստ ցանկութեան կրկնում էր առանձին բառեր և նախադասութիւններ. այդ գլանը կարելի է հանել ձայնախօսի մէջից և պօստով ուղարկել։ Գուրօնն ամեն օր լօնդօնից ստանում է նոյնպիսի գլաններ, նրանցից իմանում է բերած լուրը, յետոյ իր պատասխանը ասում և գլանն կրկին լօնդօն ուղարկում։ Նա միևնոյն կերպով է չատ անգամ հաղորդակցում Էդիսոնի հետ։ Ձայնախօսը դիտութեան ճեմարանի առաջ կրկնեց «Մարսէլիէզը», «Yankee Doodle»ն, զանազան պիեսներ, կրկնատազներ և մեղեդիներ։ Էդիսոնի արհեստանոցն այժմ օրական 100 ձայնախօս է պատրաստում։ Հնարողը ուզում է 200 ֆր. ստանալ ամեն մէկի համար։ Նա մի նոր բան էլ է կատարելագործում ձայնախօսի մէջ, որով յիշեալ գլանը հնարաւոր պիտի լինի առնել և նամակի մէջ դնել։

*** Ալժիրի Բօն քաղաքից ստացուել է հեռագիր Հանրի Բօչֆօրի 25 ամեայ որդու անձնասպանութեան մասին։ Պատճառն, ասում են, սէրն է։

*** Բերլինում կայացող գերմանական վիրաբուժական կօնգրէսի առաջին նիստում, ուր ներկայ էին 300 հոգուց աւելի, կրկին յարուցուել է «բակ» հիւանդութեան խնդիրը։ Պրօֆէսսոր Էմարխը ապացուցանում էր, որ «բակ»ը կարելի է բոլորովին բժշկել, եթէ իւր ժամանակին կարողանան ճանաչել այդ հիւանդութիւնն և անդամահատութեան ենթարկեն հիւանդին. իսկ եթէ անդամահատութիւնն յետաձգուի, այն ժամանակ հիւանդի դրութիւնը օրհասական կը լինի։ Այդպէս եղաւ նաև Ֆրիդրիխ III կայսրի հետ։ Պրօֆէսսորի խօսքերը, որոնք ակնարկ էին Ֆրիդրիխ III կայսրին բժշկող անգլիական դօկտօր Մաքէնզիին, մեծ խնդակցութիւն պատճառեցին Գերմանիայի դիտնականներին։

*** Առաջիկայ մայիսի 19-ին կարլ Ցեյսը կատարելու է իւր դօկտօրական 50-ամեայ յօբելեանը։

*** Գաչտնական թերթերին նայելով, Ֆիլօկսէրայից վերջին տասնամեակի ընթացքում 80,000 հեկտար այգի է փչացել Սպանիայում։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Թիֆլիս, պ. Մ-ին։ Սխալ էք լսացել. մահացուցակներ մենք հրատարակում ենք, երբ մեզ ուղարկում են։ Մահացուցակներն իրրև յայտարարութիւն հրատարակում ենք փողով կամ ձրի՝ նայած թէ ում մահացուցակն է, մի խնդիր հասարակական գործիչի, թէ մի փողաւէր մարդու. բացի այդ նշանաւոր է այդտեղ այն հանգամանքը, թէ ով է հասարակական գործիչի համար յայտարարութիւն տուողը։ Շատ անգամ պատահում է, որ մահացուցակ չեն ուզիս լրագրին հրատարակելու, կամ եթէ ուզիս են՝ հրատարակում է լրագրի չորրորդ երեսում. դրա պատճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ խնայողութիւնը։ Մարդկանց կարելի չէ մեղադրել, երբ նրանք փող են խնայում. չատ կարելի է, որ աղքատ են, չունին։

Խմբագիր-հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

«Նոր-Դար»-ի Օրացոյց.

1889 Թ. Ք.	Ապրիլ 30 օր.	ՏՅԶԱ Հայկ. Թ.

29—Շբ. կ. իա օր յինանց.—Լ. 11. Ն. Տ. մայիս 11. ահեկանի 22.

30—Կիր. գՃ. իբ օր յինանց.—Լ. 12. Ն. Տ. մայիս 12. ահեկանի 23.

Մայիս 31 օր.

1 —Բ. կ. իգ օր յինանց.—Լ. 13. Ն. Տ. մայիս 13. ահեկանի 24.—Ա. ծպ. 4 ժ. 44 վ., մուտքը 7 ժ. 9 վ.

2 —Ե. աՃ. իդ օր յինանց.—Լ. 14. Ն. Տ. մայիս 14. ահեկանի 25.

3 —Ե. ակ. իե օր յինանց.—Լ. 15. Ն. Տ. մայիս 15. ահեկանի 26.—Լ. լս. բարեխառն եղանակ։

4 —Չ. բՃ. իզ օր յինանց.—Լ. 16. Ն. Տ. մայիս 16. ահեկանի 27.

5 —Ուբ. բկ. իէ օր յինանց.—Լ. 17. Ն. Տ. մայիս 17. ահեկանի 28.

6 —Շբ. գՃ. իը օր յինանց.—Լ. 18. Ն. Տ. մայիս 18. ահեկանի 29.

7 —Կիր. գկ. իթ օր յինանց.—Լ. 19. Ն. Տ. մայիս 19. ահեկանի 30.—Տ. էջմիած. խաչ.—Ա. ծպ. 4 ժ. 41 վ., մուտք 7 ժ. 12 վ.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

երթևեկութիւն «Թիֆլիս» կայարանում

ԳՆԱՑՔ Է

Բաթում, պօստային. 8 ժ. 49 վ. առ.
Բագու, ,, 10 ժ. 46 վ. եր.
Սուրամ, ասլ. մար. գն. 3 ժ. 21 վ. ց.
Աղստաֆա, խառն գն. 8 ժ. 20 վ. առ.

ԳԱԼԻՔ Է

Բաթումից, պօստ. 10 ժ. 15 վ. եր.
Բագուից, ,, 8 ժ. 6 վ. առ.
Սուրամից, ասլ. մարդ. 8 ժ. 24 վ. առ.
Աղստաֆայից, խ. գն. 8 ժ. 18 վ. եր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

CAPSULES DE MATICO

RDe GIMAULT & Ce, Pnarmaciens

A PARIS

PERMIS EN RUSSIE

ՄԱՏԻԿՕԻ ԿԱՊՍՕԼՆԵՐ

Պարիզի Գրիմօ և ընկ.

դեղավաճառների.

Ռուսաստանում ընդունուած.

Այս կապսօլները հօսման (gonorrhée) դէմ գոյնաձուած դեղօրէից ամենից ապդուն է, և բացի սրանից այն առաւելութիւնն էլ ունի հեղուկ կօքահիւղով լցուած կապսօլներում։

Ծախւում է Պարիզ, վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղատներում.

(M) ա 19—16

SANTAL DE MIDY

Pharmacien de 1-re classe, à PARIS

permis en Russie

ՍԱՆՏԱԼ ԴԸ-ՄԻԴԻ

Պարիզի առաջնակարգ դեղագործ

Պ. Միդիսի Ռուսաստանում ընդունուած.

Ծախւում է Պարիզ, վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղավաճառների մօտ։

(M.) ե 30—29

№ 4711

ՐԷՅՆ-ԲՈՒԿԷՏ

Ախտեան ծաղիկներից, դէպին մանուշակի, յասմիկի, արևածաղկի, պատի, օպօպօնակի, յասմբակի, բէյնեան ծաղիկների և յասմիկի — գոնապան հատկութիւն։ Վերապանց և ամեն դուխիներ թաչկինակների համար։

¼ ֆ սրուակի գինն է 1 րուբ. 25 կոպ.

Ծախւում է Ռուսիայի բոլոր դեղատներին և ամուչտոյ իրերի ամենամեծ մագազիններում։

Գլխաւոր պտծակալը Թիֆլիսում, Ի. Բալյաբէկյան։

(M.) 4—4

ԻՍԿԱԿԱՆ Է ԴՈՐԾԱՐԱՆԻ ԱՅՍ ՆԻՇՈՎ ՄԻԱՅՆ

Huste-Nicht

Gerichtl. geschützt

ՄԻ՛ ՀԱԶԻՐ

Մեղրա-Բուսեղէն-Մայրչ-Ներսեսեան և շաքարեղէնները. *)

Լ. Գ. ՊՈՏՇ և ԸՆԿ. ԲՐՅՈՒՍԱՒՈՒՄ.

Գործ է ածւում հազի, խռիվի, կեղևկերան, կսկծոցի և կրծքացաւերի դէմ։

ԳՈՐԾԱՏՈՒԹՈՒԹԵԱՆ ՁԵՒԸ

Դոկ. Միխայէլսը) med. pract.) ներսեսեանների համար նշանակել է 3—4 անգամ օրեկան 1 մէկ գդալով կամ սոթակով։

Շաքարեղէնները հազի, կեղևկերման և կսկծոցի մրսածութեան առաջն առնում են։

Քիմիական վերլուծութիւնով և բժշկական փորձերով հաստատուած է, որ յասմեանի գէպս այս քաղցրեղէնների մէջ չեն մտնում առողջութեանը ոչնչ վնասակար նիւթեր և Ռուսիա բերելը և վաճառելը թոյլատրուած է ԲՀ շիտակ դեպարտամենտով։

*) Գինն է—մի շիշը 1 ր. 25 կ. և 2 ր. 40 կ., շաքարեղէնները 30 և 50 կոպ.

Գլխաւոր պահեստն է Ռուսիայի համար—Վ. Աուբլեի մօտ Պետերբուրգում։

Վաճառւում է Ռուսիայի բոլոր դեղավաճառանոցներում և դեղամներում։

Թիֆլիսում վաճառւում է դեղամներին ապրանքները վաճառման Կովկասեան Ընկերութեան, Վ. Դրբինեանի, Պ. Ա. Պապովի, Մ. Մարաբեանովի և Ա. Պապովի մօտ։

(M.) 17—12

ՊԱՐՖՅՈՄԵРІЯ ВЫСШАГО КАЧЕСТВА

А. СІУ и К°

МОСКВА.

НАХОДИТСЯ ВО ВСѢХЪ ГОРОДАХЪ РОССІИ.

(M) 50—35

ԿՕՅԼԵՔԵՐԻ ՍԱԼՍԱՊԱՐԵԼԵԱՆ ԷՍՍԵՆՑԻԱ

ESSENCE DE SALSEPAREILLE COLBERT

Պահանջել, որ նշանաթղթի վրայ լինի կարմիր գոյնով ստորագրութիւն։

Պահեստը գտնւում է Թիֆլիսի բոլոր գլխաւոր դեղատներում։

Պարիզում—Phcie Rogé, 9, rue du quatre Septembre.

(M.) 8—5

Թեմիս Սրբազան Առաջնորդի կարգադրութեամբ, ԱՊՐԻԼԻ 30-ԻՆ, ԿԻՐԱԿԻ օրը, ժամը 12-ին, Ս. պատարագից յետոյ ՈՐՈՇՈՒԱԾ Է ԿՍ. ՏԱՐԵԼ Թիֆլիսի ՆՈՐԱՇԵՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ օրիորդական դպրոցի ՀՈԳԱՒԱՐՁԱՒՈՒԱՅ վերջնական ընտրութիւն։ Ուստի յիշեալ եկեղեցու մեծապատիւ ծխականները հրաւիրւում են նշանակեալ ժամին նոյն եկեղեցին՝ մասնակցելու ընտրութեանը։

Վերատեսուչ բարեկարգութեան եկեղեցեաց Տփխիսայ՝
Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանց։

2—2

PAPIER FAYARD ET BLAYN

Գործ է ածւում ոսկրացաւը, շնչառական գործարանների գրգռումը, խարփուխը, կրծքի գրգռումը, ուռուցքը, վէրքը, այրուածքը, մարմնի ցրտահարութիւնը, կոշտը և ամեն տեսակ մորթի պղնձութիւնները բժշկելու համար։ Վաճառւում է բոլոր դեղատներում. (պահանջել սեպհական ստորագրութիւնը)։

(M.) 20—15

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳԷՈՐԳ ՉՈՒԲԱՐԻ

1) Բարեգործները.
2) Մի վարդի պատմութիւնը.
3) Մահոեսի Սարգիս.
4) Նա սպասում է գեռ.
5) Ցիմար ոչխարներ.
6) Մոռացուած շուն։

ՎԷՊԵՐՆ ՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Մի հոտորամ ամֆոտոատ

Գինն է 1 րուբլի 50 կոպեկ։

(Խ.) 15—8

Պատրաստ է տպագրութեան համար

ՍԻՒՄԲԻԻԼԻ

Հեռևեալ երկու երկը մի գրքում ամփոփած

I. ԳԱՂԱՓԱՐԻ ԶՈՒՀ, երգախառն դրամա հինգ գործողութիւնով։

II ՕՐԻՈՐԴ ԱԳԱՐՕԴԵԱՆ

Ստորագրուողների համար գինն Մէկ րուբլի է. ցանկացողները կարող են դիմել գրքի հրատարակիչ Աբշալ Մեհրաբեանին այս հասցէով. *Шулаверы* (Тиф. туб.) *Аршаку Меграбяну.*

5—5

„ՉՈՒՐ ՏԵՂԸ ՄԵԾ ԱՂՄՈՒԿ“

Կատակերգութիւն Վ. ՇԷՔՍՊԻՐԻ 5 գործողութեամբ։

Թարգմանութիւն Յ. ԼԱԼԱՑԵԱՆ։

Վաճառւում է կենդրոնական գրավաճառանոցում և Չ. Գրիգորեանի գրախանութում։

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

15—13

ԴԵՊՕ

ՐՕԵԼՆԵՐ ԵՒ ՊԻԱՆԻՆՕՆԵՐ

Կ. Մ. ՇՐԵԴԷՐԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՏԱՆ

ԾԱԽՈՒ ԵՒ ՎԱՐԶՈՎ

Ընդունում են ընել պատուէրներ ամենայն պատահարների համար։

Գօլովինսկի պրօսպէկտ, տուն № 8.

(Հբ. 2) 50—28

Дозволено цензурою. г. Тифлисъ, 28-го Апрѣля 1889 Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читакова